Գետք

Գետք բնակավայի վարչական տարածքը կազմում է 921.0հա, բնակչությունը 596 մարդ: Գետք համայնքի տարածքը գտնվում է Շիրակի դաշտավայրի հարավ-արևմտյան մասում Արմավիր- Գյումրի խճուղու վրա, ծովի մակարդակից 1500 մետր բարձրության վրա: Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 125 կմ, մարզկենտրոնից՝ 10 կմ: Մինչբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Ղարիբջանյան, Երազգավորս, Ազատան բնակավայրերի հետ: Բնակավայրն ունի շատ կտրտվածության դաշտեր: Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը հիմնականում ոռոգելի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Գյուղում գործում է դպրոցը: